**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

01-ը նոյեմբերի 2019թ.
ժամը $14^{00}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան(ԳԱՊ),
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,
**Հանձնաժողովի քարտուղար՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

**Բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ** ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը, իսկ նիստը նախագահում էր հանձնաժողովի անդամ՝ **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը:**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. **«Դիավանտ» ՍՊԸ-ի** ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դա ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. «Դիավանտ» ՍՊԸ-ի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

***1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Դիավանտ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում *«Դիավանտ» ՍՊԸ*-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալի.*** Ընթացակարգի հրավերով սահմանված ***«Ֆիբրոգաստրոսկոպ լույսի աղբյուրով»*** ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում հստակ նշվել է՝ «***Տեսադաշտի անկյունը առնվազն 105°***», սակայն **«Դիավանտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1)-ում նշված է «***Տեսադաշտի անկյունը 100°***», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Դիավանտ» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **«Դիավանտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված շտկումը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Վ. Վահանյան |
| Գնահատող | Գ. Անտոնյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |